ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ս. ԹՈՎՄԱՅԻ ՎԱՆՔ

ՊԱՏՄԱԿԱՆ. — Ս. Թովմայի Վանքը կառուցուած է Դողթն գաւառի Ագուլիս գիւղաքաղաքին մէջ և այդ պատճառով յաճախ կոչուած է Ագուլեաց Վանք։ Ունի հոյակապ տաճար՝ ներքին հիանալի գեղեցկութեամբ։ Վանքին պարիսպներէն ներս կան բաւական թիւով սենեակներ՝ միաբաններու և ուխտաւորներու համար։ Ս. Թովմայի Վանքին մէջ կը նստէր Դողթն գաւառի եպիսկոպոսը։ Մեր հնագոյն և պատմական եպիսկոպոսութիւններէն մին է այն, բազմիցս յիշուած Հայ Եկեղեցւոյ պատմութեան ընթացքին. — Ազգ. Հանդ., 1904, ԺԱ., էջ 306։ Ոսկեան, Վասպուրականի Վանքերը, Բ., էջ 685։

Ս. Թովմայի Վանքին առաջնորդներէն ծանօթ են բաւական անուններ, բայց ցարդ կարելի չէ եղած կազմել ամբողջական գաւազանը։ Ստորև կը ներկայացնենք ինչ որ կրցած ենք քաղել պատմական յիշատակարաններէ, զանց ընելով նորագոյն դարերը։

1. — Մուշեղ Եպիսկոպոս, 500–550. — Միսակեան, էջ 312։

2. — Յոյս Եպիսկոպոս, 554ին մասնակցած է Ներսէս Բ. Կաթողիկոսի գումարած Դուինի Ժողովին. — Ազգապատում, էջ 549։

3. — Անանասաս Եպիսկոպոս, 556–580. — Միսակեան, էջ 312։

4. — Սիոն Եպիսկոպոս, 594–607. մասնակցած է Դուինի Ժողովին, 607 թուին. — Ազգապատում, էջ 611։

5. — Մարտիրոս Եպիսկոպոս, 633ին մասնակցած է Կարնոյ Ժողովին. — Ազգապատում, էջ 690։

6. — Եսայի Եպս. Եղիպատրուշեցի, 726–775։ Մանազկերտի Ժողովին կը մասնակցի 726ին։ Կը մասնակցի նաև Պարտաւի Ժողովին 768ին։ Ապա Կաթողիկոս կ'ընտրուի 775ին. — Ազգապատում, էջ 839, 882, 893։

7. — Սարկաւագ Եպիսկոպոս, 1280–1300. — Միսակեան, էջ 312։

8. — Տէր Զաքարիա, 1375. — Ամբատեանց, Երնջակ, էջ 179։

9. — Տէրունական Եպիսկոպոս, 1424–34։ Յիշատակագիր մը գրած է թէ սա «առաջնորդ և լուսաւորիչ է եկեղեցւոյ, և քաղցելոց կերակրիչ և աղքատաց մխիթարիչ, գերեաց ազատիչ և ամենեցուն սփոփիչ». — Միսակեան, էջ 326։ Խաչիկեան, Յիշատ. ԺԵ. Դարի, Ա., էջ 337։ Նաև Ոսկեան, Բ., էջ 691։ Յիշատ. ԺԵ. Դարի, Ա., էջ 423, 440։

10. — Տէր Ստեփանոս, 1434–47, որդի Աղպուղայի և Խուանդ Խաթունի, քեռորդի Տէրունական Արքեպիսկոպոսի. — Ամատեան, Յուցակ Ձեռ. Թաւրիզի, էջ 120։ Խաչիկեան, Յիշատ. ԺԵ. Դարի, Ա., էջ 440։

11. — Ազարիա Արքեպիսկոպոս, 1476, որդի Ալթունտաղի և Օֆայ Խաթունի, հօրեղբայր Ղուկաս Եպիսկոպոսի. — Արարատ, 1911, էջ 388։

12. — Սիմեոն Արքեպիսկոպոս, 1477–88?. — Ոսկեան, Բ., էջ 692։

13. — Ազարիա Եպիսկոպոս, 1489–93. — Երնջակ, էջ 274։ Ոսկեան, Բ., էջ 694։ Ազգ. Հանդ., 1904, ԺԲ., էջ 166։

14. — Գրիգորիս Արքեպիսկոպոս, 1552, ըստ Մարգիս Գրչի բացատրութեան, «գեղաբոյս և մեծահռչակ հրաբուխի և արքեպիսկոպոս». — Երնջակ, էջ 311։

15. — Կիրակոս Վարդապետ, 1581. — Լալայեան, Յուցակ Ձեռ. Վասպուրականի, Թ. 191, էջ 465–6։

16. — Տէր Աւետիս, 1593. — Արարատ, 1911, էջ 562։

17. — Խաչատուր Արք. Երնջակեցի, 1632 –+ 1664 Յլս. 24։ Աշակերտ Մովսէս Տաթեւացիի։ Նորոգած է նախ վանքին պարիսպը, ապա սենեակները, և ի վերջոյ և կեղեցին, կրելով անպատմելի նեղութիւններ։ Իր աշակերտներէն յիշուած են Պետրոս Վրդ., Մովսէս Վրդ., Տէր Մարգիս, Տէր Հայրապետ, Տէր Մարկոս և Տէր Մանկասար. — Շահխաթունեանց, Ատորագրութիւն, Բ., էջ 326։ Արարատ, 1911, էջ 384, 563, 853։ Ոսկեան, Բ., էջ 695–709։

18. — Պետրոս Եպիսկոպոս, 1664 –+ 82, եղբօրորդի Խաչատուր Արքեպիսկոպոսի։ Կոչուած է «առաքինի և սրբասէր բարեբնապետ ... կարի յոյժ մակացու իմաստա-

digitised by A.R.A.R.@

ուէր և քաջ հռետոր։ Սա ալ իր կարգին վանքին մէջ կը կատարէ մեծամեծ նորոգութիւններ. — Երնջակ, էջ 204, 209–10։ Միսաքեան, էջ 331։ Ազգ. Հանդ., 1904, ԺԱ., էջ 307։ Արարատ, 1911, էջ 314։ Ոսկեան, Բ., էջ 710–711։ Ցուցակ Ձեռ. Երուսաղէմի, Գ., էջ 229։

19. — Յոհան Եպս. Տնակերցի, 1682–1722։ Գովուած է իբրև քաջահանճար րաբունապետ, որ եկեղեցին շինած է զանգակատունով հանդերձ. — Շահխաթունեանց. Ստորագրութիւն, Բ., էջ 323։ Երնջակ, էջ 207, 210։ Միսաքեան, էջ 327։ Արարատ, 1911, էջ 1011։ Ոսկեան, Բ., էջ 679, 711–4։

20. — Բարսեղ Վրդ. Ագուլեցի, 1730. — Ոսկեան, Բ., էջ 714–5։

21. — Յովհաննէս Արք. Գողթնացի, 1737–40, որդի Առաքելի և Նիկարի, աշակերտ Յովհաննէս Արքեպիսկոպոսի. — Ոսկեան, Բ., էջ 716–7։

Ազատ Խանը կ'աւերէ վանքը 1751 թուին. — Երնջակ, էջ 457։ Միսաքեան, էջ 331–3։

22. — Թովմաս Եպս. Դաստակեցի, 1763–96։ Մուստաֆա Խանը Ագուլիս կու գայ, 1789ին, և կը թալանէ վանքը. — Երնջակ, էջ 190, 205, 457։ Արարատ, 1911, էջ 121, 126, 1006։ Ոսկեան, Բ., էջ 719–721։

ԺԹ. դարու վերջը (1898) վանքին մէջ կը գտնուէին 89–90 ձեռագիրներ, որոնցմէ 58 հատ մնացած էր ներկայ դարու սկիզբը (1906). — Ոսկեան, Բ., էջ 723։ Արարատ, 1911, էջ 117, Մեսրոպ Վրդ. Մաքսուդեան, «Նկարագրութիւն և Յիշատակարանք Ձեռագրաց Ս. Թովմայ Առաքելոյ Վանուց և եկեղեցեաց վերին Ագուլեաց, եկեղեցւոյն Տանակերտ գեղջ և անձանց մասնաւորաց»։

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Ս. Թովմայի Վանքին երկարատև գոյութեան ընթացքին սակաւ եղած են գրչութեամբ պարապող միաբաններ։ Մեզի ծանօթ են հետևեալները միայն։

1. — Վարդան Գրիչ, 1375ին օրինակած է մէկ Նարեկ. — Երնջակ, էջ 179։

2. — Մատթէոս Վրդ., եղբայր Խաչատուր Քահանայի. 1424ին օրինակած է մէկ Գիրք Հարցմանց. — Միսաքեան, էջ 326։ Խաչիկեան, Յիշա. ԺԵ. Դարի, Ա., էջ 337։

3. — Թումայ Գրիչ, որդի Սիմէոն Քահանայի և Մայինի. 1432ին օրինակած է մէկ Պատմագիրք. — Ոսկեան, Բ., էջ 691։

4. — Ստեփանոս Քահանայ, Գրիչ, 1434ին օրինակած է մէկ Աւետարան. — Ոսկեան, Բ., էջ 691։

5. — Յովհաննէս Վարդապետ, 1436ին օրինակած է մէկ Պատմ. Ս. Թէոդորոսի Զօրավարի. — Միսաքեան, էջ 326։

6. — Մատթէոս Քահանայ, 1447ին օրինակած է մէկ Տօնական, Գողթնի Տ. Ստեփանոս Արքեպիսկոպոսին համար. — Աճառեան, Ցուցակ Ձեռ. Թաւրիզի, էջ 120–23։

7. — Յովհաննէս Գրիչ, որդի Մելքիսէթ Քահանայի և Խաթունմէլիքի, եղբայր Մելքիսէթ և Կարապետ քահանաներու։ Օրինակած է Աւետարան մը, 1471ին, ամի Փաշայի համար. — Լալայեան, Ցուցակ Ձեռ. Վասպուրականի, էջ 463։

8. — Գրիգոր Քահանայ, 1481–9, որդի Պետրոս Քահանայի և Մինըրիչաթի, 1481 (կամ 1488)ին օրինակած է մէկ Յայսմաւուրք, սահուն թուղթի (կամ մագաղաթի?) վրայ, Պարոն Նուրիճանի խնդրանքով. — Երնջակ, էջ 299։ Ազգ. Հանդ., 1904, ԺԲ., էջ 171–2։ Ոսկեան, Բ., էջ 694։

9. — Եփրեմ Քահանայ, Գրիչ եւ Ծաղկող, որդի Յովհաննէս Քահանայի, 1551ին օրինակած և նկարազարդած է, մագաղաթի վրայ, մէկ Աւետարան, Շէնհեռ անապատի կրօնաւորուհի կոյս Մարիամի համար. — Երնջակ, էջ 276–8։

10. — Մարտիրոս Քահանայ, Գրիչ, 1638ին աւարտած է մէկ Գիրք Հարցմանց, Գր. Տաթևացիի. — Ոսկեան, Բ., էջ 696–706։

11. — Ղազար Քհն. Ագուլեցի, 1671ին օրինակած է մէկ Զգօն Գիրք եայլն, ուրիշ երկու գրիչներու հետ. — Երնջակ, էջ 203–4։ Կար., Ցուցակ Ձեռ. Էջմիածնի, թիւ 499 (թկ. ՌՃԻ, ապ. ՌՃԹ, 1680, յայտնի սխալ)։

12. — Միքայէլ Վարդապետ, (1730ին?), Ս. Թովմայի Վանքին մէջ կ'օրինակէ մէկ Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի, Առաքել Սիւնեցւոյ. — Կար., Թ. 1863։

13. — Մեսրոպ Վարդապետ, 1740ին օրինակած է մէկ Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննու. — Երնջակ, էջ 140։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@